ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԻԱՅՆ ԱՐՑԱԽԻՆԸ ՉԷՐ...

- Մարտի 15, 2021

Սիրվարդ ՄԱՐԳԱՐՅԱՆ

погода Харьков
туризм и отдых

'Ա.Ա.'- ի հարցազրույցը 'Սատարենք մեր հերոսներին' հասարակական կազմակերպության

համահիմնադիր-նախագահ Վիգեն ԱՐԱԲՅԱՆԻ հետ:

- Երկու նախադասությամբ կասեք՝ ո՞վ է Վիգեն Արաբյանը:
- Տիգրանակերտցու թոռ եմ, հայրս ծնվել է Սիրիայում, ես՝ Լիբանանում, և արդեն 16 տարի է բնակվում եմ Երևանում:
- Ծանոթանանք Ձեր բարեգործության 'աշխարհագրությանը'... Որքան ինձ հայտնի է, շրջանակները լայն են, իսկ վաղեմությունը երկու տասնամյակից ավելին է:
- Նախ՝ ես ինձ համարում եմ արցախցի, Շուշիում տուն ունեմ, չեմ ասում ունեի, ասում եմ ունեմ և արդեն 20 տարի է... Այն 1885 թվականին կառուցված տուն էր, վերակառուցել եմ, և վստահ եմ, որ մի օր վերադառնալու եմ իմ տունը: Մեր՝'Սատարենք մեր հերոսներին' կազմակերպությանը« աջակցում են բազմաթիվ բարերարներ: Շուրջ 20 տարվա ընթացքում բազմաթիվ ծրագրեր ենք իրականացրել, գործունեության առաջին տարիներին զբաղվել ենք ազատագրված տարածքների վերաբնակեցմամբ, իսկ ապրիլյանից այս կողմ, վերջին 5 տարիների ընթացքում« բացառապես զբաղված էինք Պաշտպանության բանակի խնդիրներով, հիմնականում թիկունքային և առողջապահական ուղղվածության ռազմավարական հարցերն էին մեր ուշադրության առանցքում: Երբ սկսեցինք աշխատել, հասկացանք թե ինչ լուրջ խնդիրներ ունի բանակը: Այս վերջին պատերազմից հետո որոշեցինք կրկին վերադառնալ վերաբնակեցման ծրագրերին, մենք այն համոզմանն ենք, որ առանց վերաբնակեցման ամեն ինչ անիմաստ է դառնում: Նույն թափով շարունակվում են մեր ծրագրերը բանակի հետ, Մարտունու, Ասկերանի և Մարտակերտի շրջաններում սկսել ենք նաև վերաբնակեցման աշխատանքները, ծրագիրն իրականացնում ենք ռազմավարական մոտեցումներով: Ցավով եմ ասում, որ ոչ բոլորին ենք կարողանում օգնել՝ սահմանափակ ռեսուրսների պատճառով: Պահի դրությամբ, առաջնահերթության կարգով, օգնության ձեռք ենք մեկնում բազմազավակներին ու զոհված զինծառայողների ընտանիքներին: Նախկինում էլ մենք հավատում ու կարևորում էինք վերաբնակեցման ծրագիրը, սակայն տանուլ տվեցինք, որովհետև քիչ էինք արել, 30 տարվա ընթացքում ծրագրերի 10 տոկոսն էլ չարեցինք... Հիմա ունենք՝ ինչ ունենք, և կարծում եմ՝ հերիք է
Ստեփանակերտում կենտրոնանանք, այսուհետ կառուցելու ենք սահմանամերձ գյուղերում: Պետության հետ համագործակցելով՝ այս պահին Նախիջևանիկ գյուղում հողակտոր ենք ձեռք բերել« մոտ 3 հեկտար, չափագրման աշխատանքներն սկսված են, մոտ օրերս նաև նախագծման աշխատանքները կմեկնարկեն: Նախիջևանիկը սահմանամերձ և անմխիթար վիճակում գտնվող գյուղ է, մեր նպատակն է և գյուղը վերակենդանացնել և միաժամանակ վերաբնակիչներին տեղավորել: Վերաբնակներն հիմնականում Հադրութի, Ասկերանի ու Շուշիի շրջաններից են: Մենք ոչ միայն պիտի վերաբնակեցնենք, այլև պարտավոր ենք այդ մարդկանց կյանքը վերաստեղծել, և ոչ միայն տուն տալ, ինչը ժամանակին արել են որոշ պատասխանատուներ: Կարծում եմ՝ մենք պետք է ավելին անենք, այդ մարդիկ ոչ միայն շենք-շինություն են կորցրել, այլև կորցրել են իրենց մասունքները, որին մի ողջ կյանք են նվիրել« ու ժամերի ընթացքում այն փոշիացվել է: Այն ամենը, ինչ նրանք կարող են ձեռք բերել 30 տարվա ընթացքում, մենք պարտավոր ենք նրանց տալ սեղմ ժամկետներում, նրանցից շատերն այն տարիքում են, որ արդեն տուն ու տեղ դնելու ժամանակ էլ չունեն: Առաջին փու-

լում 10 տուն ենք կառուցելու, հետն էլ տրամադրելու ենք կենցաղային, գյուղատնտեսական տեխնիկա, անասնագլխաքանակ և այլն: Ծրագրեր ենք իրականացնում նաև Մարտունիում ու Մարտակերտում. վերակառուցում ենք, կահավորում, հույս ունենք, որ 6 ամսվա ընթացքում տեղահանվածների մեծ մասը տանիք կունենա« և կոչ եմ անում բոլոր կարող ուժերին՝ միանալ մեզ, սա ոչ միայն աշխատանքի կարևորության հարց է, այլև՝ Արցախի փրկության: Մենք չենք կարող հույս ունենալ, որ այլ շրջանում ու քաղաքում տնավորված-բնավորված քաղաքացին, մեկ կամ երկու տարի անց, կրկին տեղափոխվելու միտք կունենա, ուստի անհրաժեշտ է նրանց ժամ առաջ հայրենիք վերադարձնել և օգնել արագ ոտքի կանգնելու: Մեկ տարի անց մենք բարոյական իրավունք չենք ունենա այդ մարդկանց ասել՝ վերադարձեք սահմանամերձ գյուղ:

- Որքան էլ դժվար է հավատալը, Արցախն այսօր վիրավոր է« ու վերքերն ամոքելու համար առավել քան երբևէ հայության համախմբման կարիքն ունի... Ժողովրդական իմաստությունն ասում է՝ մի ծաղկով գարուն չի գա, մի ձեռքը ծափ չի տա...

- Մենք իրականում մի ծաղիկ ենք, միաժամանակ փորձառություն ունեմ ասելու, որ մի ձեռքն էլ, մի կարող ուժն էլ հաճախ վարակիչ է եղել: Փորձում ենք մարդկանց փոխանցել այն ամենը, ինչին որ մենք ենք հավատում, հավատում ենք մեր ժողովրդին, հատկապես՝ սփյուռքահայերին, որոնցից մենք ստանում ենք մեր գումարների բացառիկ բաժինը: Մենք պարտավոր ենք վերականգնել նրանց վստահությունը, հարցը միայն մտային չէ, գիտակցական չէ, այն հոգեկան է, նրանք մեր միջոցով պետք է անձնական օրինակ տեսնեն: Այս հողի վրա ապրողն այլընտրանք չունի, այս հողի վրա ապրող հայը հիասթափվելու իրավունք չունի: Այլընտրանք չկա« պիտի ապրենք: Խոսքս միայն Արցախի մասին չէ, ես Հայաստանն էլ ի նկատի ունեմ: Իմ գաղափարակից բոլոր ընկերների համար Արցախը Հայաստանի մի մասն է, ամենակրիտիկականն ու ամենահոգեհարազատը: Մեր աշխարհասփյուռ հայրենակիցները պիտի հասկանան, որ իրոք այս հողի վրա ապրող հայը չունի տարբերակ, տարբերակ չունենք նաև մենք... Այս պատերազմը միայն Արցախինը չէր, այն Հայաստանի ու հայության պատերազմն էր... Ճակատամարտը տանուլ տվեցինք, բայց վերջնական պատերազմում պիտի հաղթենք, եթե ոչ, ապա կասկած չունենք, որ հաջորդ պատերազմը Երևանի կենտրոնում է լինելու: Երեսուն տարի է նույն բանն ենք ասում. մենք մի հայրենիք ենք, մի պատերազմ ունենք և մի պայքար: Սփյուռքահայը նաև պիտի հասկանա, որ մենք այլընտրանք չունենք, բոլորս կարող ենք խռովել, թողնել ու գնալ այս հողից, հետո ի՞նչ երեսով պիտի ապրենք աշխարհում: Միակ ճանապարհը մնալն ու պայքարելն է, մենք պարզապես իրավունք չունենք հիասթափվելու: Երկու օր առաջ ինձ հարց էին տալիս՝ ինչո՞ւ եք որոշել Արցախում վերաբնակեցման ծրագիր սկսել, ասացի՝ գիտեք, մե՞նք չենք որոշել, մենք պարզապես սատարում ենք այն մարդկանց, այն հերոսներին, ովքեր իրենք են որոշել 6 ամսական երեխային գրկած վերադառնալ Մարտակերտ և անմխիթար, թշվառ վիճակում ապրել վարձակալությամբ... Որոշողն իրենք են, մենք հետևող ենք, ստեղծող ու աջակցող ենք: Եթե ի սկզբանե իրենք այդպես են որոշել, մենք ո՞նց կարող ենք նրանց որոշմանը չսատարել:

- Բարեգործությունը /փոքր թե մեծ, կապ չունի/ մարդկային մեծագույն առաքինություններից է... Ինչպե՞ս կբանաձևեիք այն:

- Որքան էլ տարօրինակ հնչի, ես այդ բառը չեմ սիրում... ես լավ չեմ զգում, երբ մարդիկ խոսում են այդ մասին: Ես իրականում չեմ էլ համարում, թե մենք բարեգործություն ենք կատարում, մեր արածն ազգային է ու ռազմավարական նշանակության... Այս անգամ մեզ հետ բերել ենք 5 շտապօգ-

նության ռեանիմոբիլ մեքենաներ, մեկն էլ ապրիլյան պատերազմի օրերին էինք բերել, բա ամոթ չի՞ մեզ, որ մեր վիրավոր զինվորներին ՈՒԱՉ-ով ենք տեղափոխել ճակատից հոսպիտալ: Թուրքը իր՝ այսպես կոչված հայրենյաց պաշտպանին լավագույն
Տոյոտայով է տեղափոխում, որից նրանք ունեն 225 հատ, իսկ մենք ընդամենը՝ մեկը: Ես սա չեմ ասում նեգատիվի համար, ասում եմ, որ ի վերջո հասկանանք մեր առաջնահերթ անելիքները: Եկեք ազգովին վերակառուցենք մեր երկիրն ու բանակը:
Պատճառ կար, որ պարտվեցինք այս պատերազմում, և պատճառը բնավ մեր 'դուխ' չունենալը չէր, այն ավելի խորքային է ու լուրջ, ուրեմն եկեք փոխվենք ու լրջանանք վերջապես: Ոչ հիասթափվելու իրավունք ունենք, ոչ որևէ տեղ գնալու, թուլանալու ու գլուխներս կախելու... Մերը պայքարելն է, հզորանալը ու ծնկած տեղից շատ արագ բարձրանալը: Մենք ունենք բազմաթիվ անհատ-բարերար աջակիցներ Կանադայում, Միացյալ Նահանգներում ու Եվրոպայում: Ուրախ ենք փաստելու, որ մեզ աջակցում է նաև 'Ավրորա' հիմնադրամը: Մենք բաց ենք բոլոր բարեգործական ծրագրերով զբաղվողների առաջ: Կազմակերպությունը, որպես այդպիսին, ունի նվազագույն ծախսեր, նույնիսկ
չունենք գրասենյակ, և յուրաքանչյուր լումա ծախսում ենք նպատակային ու խնայողաբար: Վստահ ենք, որ կլինեն նոր կազմակերպություններ ու անհատներ, որոնք կհամալրեն մեր նվիրատուների շարքերը: Մեր կայքէջին /www. supportourheroes. am/ կարող են ծանոթանալ համացանցում, միայն ուրախ կլինենք համագործակցել ի սեր և հանուն հայրենիքի:

строительство заборов
городской портал Ялты

Կայք էջից օգտվելու դեպքում ակտիվ հղումը պարտադիրէ © ARTSAKH TERT. Հեղինակային իրավունքները պաշտպանված են.